ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՍԻՄՈՆ ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ – Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՍԻՄՈՆ ԿՐԿԵԱՇԱՐԵԱՆ, ՈՐ ՅԵՐԵՒԱՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ հայ ժողովրդի արժանաւոր զաւակիդ:

Սիրելի Պրն Կրկյաշարեան, մեծ գոհունակութեամբ ենք անդրադառնում տարիների Ձեր բեղմնաւոր վաստակին եւ մանկավարժական ու գրական գործունէութեանը: Երիտասարդ հասակում Դուք հազարաւոր յունահայերի հետ հարազատներով եկաք Մայր Հայրենիք, որտեղ ուսումնատենչ ու խանդավառ ոգով կրթութիւն ստացաք Խաչատուր Աբովեանի անուան մանկավարժական ինստիտուտի պատմութեան ֆակուլտետում: Ձեր գիտելիքներն ու աստուածատուր շնորհները Դուք առաւել զարգացրեցիք Գիտութիւնների Ակադեմիայի պատմութեան ինստիտուտում եւ Սանկտ-Պետերբուրգի համալսարանում՝ հարթելով գիտական-ստեղծագործական Ձեր ուղին դէպի մեծ գիտութեան ճանապարհ: Անուանի հայագէտների հետ Դուք նոր թափ հաղորդեցիք հայագիտութեան եւ աղբիւրագիտութեան վերելքին՝ հեղինակելով մի շարք արժէքաւոր ուսումնասիրութիւններ եւ գիտահետազոտական փայլուն աշխատանքներ: Ճշմարտապէս արժեւորելով յունա-հռոմէական սկզբնաղբիւրների կարեւորութիւնը հայոց պատմութեան հիմնովին ուսումնասիրման կարեւոր գործում՝ արդի և հին յունարէնի քաջիմացութեան շնորհիւ Դուք նոր ձեռքբերումներ էք արձանագրել պատմագիտութեան ասպարէզում՝ առաւել լուսաբանելով հին Հայաստանի պատմութեան կարեւոր ժամանակահատուածներ:

Մեզ համար առանձնակի ուրախութիւն է հաստատել, որ արդիւնաշատ Ձեր կեանքի ընթացքում տքնաջան աշխատանքով թարգմանել էք նաեւ յոյն անտիկ հեղինակների՝ Հոմերոսի, Հերոդոտոսի, Պլուտարքոսի եւ այլոց մեծարժէք գործերը, ինչպէս նաեւ քրիստոնէութեան վաղ շրջանի ուսումնասիրման համար կարեւոր Յովսէփոս Փլաւիոսի երկերը: Այս գրական օգտաշատ աշխատանքների համար Դուք ընտրուել էք Հայաստանի գրողների միութեան անդամ՝ արժանանալով տարբեր մրցանակների: Ձեր անունը հանրաճանաչ է, սիրելի ու գնահատելի գիտական լայն շրջանակներում:

Երկար տարիների բազմարդիւն ուսուցչագործութեամբ անսպառելի կորով ու եռանդ էք ներդրել նաեւ նոր սերնդի կրթութեան շնորհակալ գործում՝ դասաւանդելով Երեւանի պե-

պական համալսարանում եւ յատկապէս Ձեր մեծ աւանդն էք բերել Մայր Աթոռ Սուրբ Էջ-միածնի Հոգեւոր Ճեմարանում՝ հոգեւորականաց պատրաստութեան ասպուածահաճոյ գործում:

Մեծարգոյ Տիար Կրկեաշարեան, հայագիտութեան եւ մանկավարժութեան անդաստա-նում Ձեր մեծ վաստակի բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնոր-հում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ – ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով առ Աստուած՝ մաղթում ենք Ձեզ քաջառողջ կեանքի արեւա-ռատ երկար օրեր: Թող Բարձրեալ Տէրը պարգեւի Ձեզ նոր եռանդ ու ստեղծագործական աւիւն, որպէսզի շարունակէք բոլորանուէր Ձեր ծառայութիւնը մատուցել գիտութեանը, Հայ-րենիքին ու ժողովրդին:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 3-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆԾԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 269